Հաշվետվություն

Մեխակ Ապրեսյանի 2018 թվականի փետրվարի 11-ից 14-ը Բուլղարիայի Հանրապետության (ք. Սոֆիա) գործուղման արդյունքների Վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Մեխակ Ապրեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Բուլղարիայի Հանրապետություն (ք. Սոֆիա), 2018 թվականի փետրվարի 11-14-ը

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն զբոսաշրջությանն ու տնտեսական աճին նվիրված Եվրամիության բարձաստիճան նախարարական համաժողովին:

5. **Քննարկված թեմաները՝**

- Զբոսաշրջությունը և տնտեսական աճը. կապ, թվայնացում և ներդրումներ,
- Զբոսաշրջությունը և անվտանգությունը. աշխարհաքաղաքական և տնտեսական ասպեկտներ,
- 2018 թվականը՝ ԵՄ - Չինաստան զբոսաշրջային տարի,
- Զբոսաշրջության ոլորտում Եվրոպա-Չինաստան համագործակցություն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ հետևյալ անձանց հետ.

- ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղար Զուրաբ Պոլոլիկաշվիլի,
- Բուլղարիայի Հանրապետության զբոսաշրջության նախարար Նիկոլինա Անգելկովա,
- Բուլղարիայի Հանրապետության զբոսաշրջության նախարարի տեղակալ Իրենա Գիորգիեվա,

- Ճանապարհորդության եվրոպական հանձնաժողովի (European Travel Commission) տնօրեն Էդուարդո Սանտանդեր,
- Եվրոպական զբոսաշրջային օպերատորների միության (ETOA) գլխավոր տնօրեն Թոն Ջենկինս,
- Եվրոպական հանձնաժողովի DG GROW ծրագրի ներկայացուցիչ Աննա Աթանասոպաուլու:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն կայացվել:

ՄԱԿ-ի ԶՀԿ գլխավոր քարտուղարի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-ՄԱԿ համագործակցության հետ կապված հարցեր, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել հետևյալ համատեղ ծրագրերի շրջանակներում,

- ՄԱԿ ԶՀԿ փորձագիտական խմբի այցելություն Հայաստան՝ Զբոսաշրջային սատելիտային հաշիվ-համակարգի ներդրման համար Հայաստանում իրավիճակի գնահատման, հետագա անհրաժեշտ քայլերի և համապատասխան բյուջեի մշակման նպատակով: Ներկայումս Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ քննարկվում է այցի ֆինանսավորման հնարավորությունը,
- ՄԱԿ ԶՀԿ, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության և անդամ պետությունների հետ համագործակցությամբ «Մետաքսի ճանապարհին «Գինու զբոսաշրջություն»» տարածաշրջանային միասնական զբոսաշրջային արդյունքի ձևավորման և խթանման ռազմավարության մշակմանն ու իրականացմանն ուղղված հայկական կողմի նախաձեռնության ընթացքի (երկրորդ փուլի) վերաբերյալ: Արդյունքում ՄԱԿ ԶՀԿ-ից ստացվել է նախաձեռնությանն ու ծրագրի իրականացման գործընթացում Հայաստանի առաջնորդությանը ՄԱԿ ԶՀԿ գրավոր հավանությունն ու աջակցությունը (կցվում է): Առաջին փուլում ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Հայաստանում «Իմ Հայաստան» ծրագիրն իրականացնող "Սմիթսոնիան" ինստիտուտի հետ համագործակցությամբ մշակվել և ՄԱԿ ԶՀԿ էր ներկայացվել ծրագրի հայեցակարգը: Հավանության և աջակցության արժանանալուց հետո կմեկնարկի երկրորդ փուլը. Քննարկումներ անդամ պետությունների հետ և ռազմավարության մշակում:

Եվրամիության անդամ երկրների ներկայացուցիչների հետ արդեն իսկ որոշակի քննարկումներ տեղի ունեցան,

- ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղարի հետ նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև աշուն Հայաստան այցելության վերաբերյալ,
- Եվրոպական զբոսաշրջային օպերատորների միության գլխավոր տնօրենի հետ քննարկվեց կազմակերպության հետ Հայաստանի Ներգնա Տուրօպերատորների միության և հայկական զբոսաշրջային օպերատորների համագործակցության հնարավորությունները,
- Ճանապարհորդության եվրոպական զբոսաշրջության հանձնաժողովի տնօրենի և Եվրամիության անդամ երկրների ներկայացուցիչների հետ քննարկվեցին համագործակցության ներկա վիճակն ու զարգացման հնարավորությունները:

8. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝

Մեխակ Ապրեսյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝